

նեաիկ, ուր Վենետացիք Համբարձուժը կը տօնէին: Առանց ժամանակ անցնելու կը մտնէ հոս նաւ եւ կը թխարկէ Կրեաէ—Ձատրա գծով Իզմիր: Ի Կօզալհիսար ստացած ջերմ մը կը ստիպէ զինքը աւելի քան հինգ ամիս մնալ Իզմիր (Ուղ. 182—183):

1613ին, զարնան վերջերը, կը մեկնի Պրուսա—Ադաճէնկիդ—Պօլու—Թօսիա—Օսմանջուխ—Մարզուան (այդեկութքին)—Ամասիա—Թոխաթ—Սերաստիա—Մալաթիա—Խարբերդ—Բալու—Ճապաղջուր—Մանուշկուտ ճանապարհով կը հասնի Մուշ—Ս. Կարապետ (Ուղ. 197):

Երեք օր միայն կը մնայ Սիմէոն Ս. Կարապետ. եւ Խարբերդ—Ամիթ—Թոքատ—Սերաստիա գծով կը վերադառնայ Կ. Պոլիս (1614 ամա՞ն):

«Կացի անդ (ի Կ. Պոլիս) ամ մի, կը գրէ, աշխատելով եւ վաստակելով գրադրութեամբ, զի ժողովեցից պաշար սուրբ յԵրուսաղէմ գնալ. զի եւ անդ էի ուխտ արել: Եւ Ստամպօլ գրագիրն խիստ խիճմաթ ունէր. եւ թէպէտ կարգաւորք շատ են, գրօղ չկայ. զի կարդալն ա՛յլ արվեստ է եւ գրելն ա՛յլ: Եւ ավին ինձ յուր գիրք գրել աշխարհականք եւ կարգաւորք եւ քահանայք: Իսկ ես ջանայի եւ խայրաթ առնէի, եւ տգնէի ցայդ եւ ցերեկ. վութայի ճեպէի հանապաղ, զի վաստակիցեմ ճանապարհի խարճ. զի ձեռս դատ չէր մնացել. եւ օրն Ծ.—Կ. դրամ